ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԴՐՈՒԹՅԱՆԸ

«Հայաստան» հրատարակչությունը տարիներ առաջ նախաձեռնեց Լեոյի «Երկերի ժողովածուի» տասհատորյակի հրատարակությունը։

Ճիշտ է, տասհատորյակը չէր հավակնում լինել պատմաբանի երկերի լիակատար ժողովածուն, բայց կարևոր էր նրանով, որ տարիների երկար ընդմիջումից հետո Լեոյի պատմագիտական և գրականագիտական հարուստ ժառանգության առաջին հրատարակությունն էր։

1966 թ. ընթերցողը ուրախությամբ ընդունեց պատմաբանի երկերի ժողովածուի առաջին հատորը։ Զուլշացան նաև երկրորդն ու երրորդը։ Ընթերցողները կարծում էին, թե Լեոյի աշխատությունների լույս ընծայման հարցում որոշ համաչափություն է ստեղծվել և ուրախ էին, որ գոնե յուրաքանչյուր տարին մեկ իրենց սեղանին կդրվի հերթական գիրքը։ Բայց նրանց ուրախությունը կարճատև եղավ։ 1969 թ., այսինքն երրորդ հատորը լույս ընծայելուց հետո, համաչափությունը խախտվեց։ Անցավ մեկ տարի, հետո երկրորդը, կիսվեց նաև 1972 թ., բայց այդպես էլ «Ժողովածուի» հերթական հատորը լույս չտեսավ։ Ու անհասկանալի է, թե «Հայաստան» հրատարակչությունը ինչո՞ւ է ձգձգում Լեոյի երկերի հրատարակությունը։

Ա. ԴԻՎՈՐԴՅԱՆ

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ իրականացվող «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի՝ առ այսօր լույս տեսած առաջին, յոթերորդ և ութերորդ հատորները արագորեն սպառվեցին։ Այս փաստը վկայում է այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերում են մեր ընթերցողները այդ գրքի նկատմամբ։ Եվ դա, իհարկե, պատահական չէ։ Ջնայած հայ պատմագրության մեկուկես հազարամյա անցյալին, նման հրատարակություն, որն ամփոփում է մինչև օրս կատարված հայագիտական հետազոտությունների արդյունքները, լույս է տեսնում առաջին անգամ։

Բայց արդյոք ութհատորյակը մատչելի՞ է ընթերցող լայն հանրության, ասենք՝ գյուղի աշխատավորության, բանվորության, ոչ հումանիտար բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար։ Իմ կարծիքով մատչելի չէ։ Ութհատորյակը կազմող մեր անվանի գիտնականները հայ ժողովրդի պատմությունը գրելիս նյութը շարադրել են գիտական բարձր մակարդակով, հանգամանք, որն աշխատությունը դարձնելով բարձրարժեք, միաժամանակ «ձեռնտու» չէ շարքային ընթերցողին, որովհետև դա վերջին հաշվով նեղ մասնագիտական ուսումնասիրություն է՝ հագեցած պատմագիտական, հնագիտական տերմիններով, սկզբնաղբյուրների հանգամանալից վերլուծություններով և պարունակում է այնպիսի մանրամասներ, որոնք շատ արժեքավոր լինելով հանդերձ, ավելի շուտ հետաքրքրում են մեր ժողովրդի պատմությունը որպես գիտություն ուսումնասիրողներին, քան շարքային ընթերցողին։

Թվում է թե ժամանակն է, որ սովետահայ պատմաբանները, անկախ ութհատորյակից, ձեռնամուխ լինեն հայ ժողովրդի պատմության ավելի սեղմ (մեկ կամ երկու հատորից կազմված), ընթերցող լայն շրջաններին ավելի մատչելի մի այլ հրատարակության։

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ